№№ 8—9 ՕԳՈՍՏՈՍ — ՍԵՊՏԵՄԲԵՐ 1903

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№№ 8—9

*Աչուն* (պատկեր)։
*Հոսիր դու Աղբիւր* (ոտանաւոր)։—Ծերուկ։
«*Աղբիւր*» (ոտանաւոր)։
*Ապաստանի ժպտ.*—*Մար. Բ. Յարութիւնեանց*։
*Կուշտ ես դու* (ոտանաւոր).—Ծերուկ։
*Մեր փրկիչը.*—*Աւօ-ձան*։
*Ուղեւորի արշալոյսը* (պատկեր)։
*Հեյնեից* (ոտանաւոր).—*Սիմ. Բաբիեան*։
«*Մարիաւէ*» *մենաստանը* (*Կարմէն-Սիլւայից*).—*Զրիմցի*։
*Ղադիի դասը.*—*Կ. Չ.*
*Հեյնեից* (ոտանաւոր).—*Գ. Բաբուրեանց*։
*Զուարճալիք* (*հանելուկներ*)։

### Բ. Բաժին

*Հեմիխա Պետապոցցի* (*կըշարունակուի*)։
*Փրիդերիկոս Փրեօրեր.*—*Չալալ Տէր-Գրիգորեան*։

---

*Սերվայ №-ի հետ ուղարկում է մեր բաժանորդներին* „Проводникъ“ *ընկ. կրկնակօշիկների համար յայտարարութիւնը։*

# Ա Ղ Բ Ի Ւ Ր

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳԻՐ

*մանուկների, ծնողների եւ դաստիարակների համար*

№№ 8—9

XXI ՏԱՐԻ ՕԳՈՍՏՈՍ—ՍԵՊՏԵՄԲԵՐ 1903 Թ.

ԹԻՓԼԻՍ

Типографія Бр. Таварткиладзе | Տպարան Եղբ. Թաւարտկիլաձէ

1903

Дозволено цензурою, Тифлисъ, 23 октября 1903 г.

Հոսիր զու «Աղբիւր», մարդու հոսանքով: Հայ մանկանց սիրտը առաջ լցրու եռանդով եւ

# կեանքով. կազդուրէ նրանց մաստաղմոքերը:

Ծերուկ

„Աղբիւրը“ առաւօտ,
վաքուր հոսանքով
Շարունակում է քրքիջել աւելորհաւոր:
Իւոր սկսուքները միշտ ի նեւ կեանքով,
Նա ուղղութեանը՝ կրմնայ հաւտաւտ
Մոտաւոր սնունդ հայ մանկան տալ չատ:

## Ա Պ Ա Ս Տ Ա Ն Ի  Ժ Ա Ց Ո

—

Մի լեռան կիրճից տասը մղոն հեռու, ապրում էր մի խեղճ որբևայրի, նրա մօտերքում ոչ մի մարդկային բնակութիւն չկար, նա բոլորովին մենակ էր իր երկամեայ մի հատիկ տղայի հետ։ Այդ թշուառ դրութեան մէջ չուտով նրան վիճակուեց անել մի երկար ճանապարհորդութիւն իր սիրելիի հետ։

Աւաւօտեան երբ նա ճանապարհուեց, երկինքը շատ պարզ էր, օդը ջինջ ու մաքուր, և այդ բոլորը միասին խոստանում էին մի գեղեցիկ օր որբևայրի կնոջը։

Յանկարծ կէսօրից քիչ առաջ, եղանակը սկսեց փոխուել, հիւսիսային կողմից երկինքը հետզհետէ

սկսեց սևանալ և մթագնել, քիչ յետոյ մառախուղները և ամպերը ծածկեցին բլուրների գագաթները և ձրրկալից հողմը փչեց ժայռերի վրայով, փոթորիկն ամբողջապէս ծածկեց իր սև թուխպերով լեռան մակերևոյթը: Հողմերին հետևեց անձրևը, անձրևին ձիւնախառն անձրև, իսկ այս բոլորից յետոյ սկսեց սաստիկ ձիւնը: Այս բոլորը կատարւում էր մայիս ամսում, որը մինչև այսօր էլ յիշւում է ժողովրդի մէջ «Մեծ մայիսեան փոթորիկ» անունով: Նոյն իսկ ձմեռւայ ամենակատաղի օրերումն էլ երբէք չէր տեսնւել մի այսպիսի ծանր և ուժգին ձիւնի տարափ կամ սրանից աւելի կատաղի փոթորիկ, որ փակէր լեռնային կիրճը՝ լցնելով ամեն խոռոչներ և սպիտակացնելով ամենուրէք:

Վերջապէս խեղճ այրին հասաւ լեռնային անցքի մօտ իր երեխան գրկում, բայց բոլորովին յոգնած, թրջած և ցրտից սառած: Նա շատ լաւ գիտէր որ մի մարդ հեռաւորութեամբ կար մի լեռնային այր, որտեղ կարող էր պատսպարան գտնել, բայց այնուամենայնիւ առաջ գնալ անկարելի էր՝ որովհետև ձիւնը ամբողջովին ծածկել էր կիրճը, իսկ յետ դառնալ՝ այդ ևս անկարելի էր նրա համար: Նա պիտի գտնէ հէնց այնտեղ մի ապաստանարան, լինէր նոյն իսկ մի կատւի կամ աղուէսի որջ: Մի քիչ ժամանակ նա թափառելով ապառաժային հսկայ բեկորների մէջ, որոնք բարձրութիւնից իջել էին մինչև խոր ձորերի անդունդը, վերջապէս նա գտաւ մի փոքրիկ անկիւն: Ջննելով

խոտաջը, նա յետ յետ քաշուեց և երեխային աւելի ամուր սեղմեց իր բաբախող կրծքի վրայ:

Ձիւնը գնալով աւելի և աւելի սաստկանում էր և թոյլ չէր տալիս Թշուառին մի քայլ փոխելու իր տեղից: Գիշերային խաւարն էլ մօտենում էր, խեղճ կնոջ սիրտը վախից և երկիւղից ապրատփում էր: Նրա միակ մտածութեան առարկան էր փրկել իր երեխային և միմիայն իր սիրելի մի հատիկին: Իր կեանքի փրկութեան համար նա երբէք չէր մտածում. վրայի շալով փաթաթեց, բայց այդ միայն բաւական չէր, առանց այն էլ շալը թէ նօսր էր և թէ պատառոտուած, ուստի և չէր կարող հանգիստ լինել Թշուառ կինը երբ տեսնում էր վտանգ է սպառնում իր սիրելիի կեանքին և բացի այդ ձիւնն էլ պատրաստ անելով չարունակ լցնում էր այն խոտաջը, որը նրանց համար ամենաթանկ և միևնոյն ժամանակ մի ողորմելի պատսպարան պիտի լինէր:

Գիշերը վրայ հասաւ: Գորովալից մայրը իր վրայի բոլոր ցնցոտիները հանելով փաթաթեց իր սիրելի երեխային և զգոն յուսահատութեամբ պրես նոյն խոտաջի մէջ, մի քանի չորացած տերևների և ցախերի վրայ, իսկ այնուհետև նա վճռեց յետ դառնալ, գուցէ մի օգնութիւն հասցնէ երեխայի կեանքը փրկելու: Մի անգամ էլ նա դրկեց իր սրտի հատորին, որը կարող էր վերջինը լինել, ծածկելով անմեղ երեխայի երեսը ջերմ արցունքներով ու համբոյրներով և ամենայն զգուշու-

թեամբ, քնած երեխային ցած դնելով՝ վազեց դէպի ձիւնի տարափը:

Փոթորկալից գիշերւան յաջորդեց մի պայծառ առաւօտ: Արեգակը փայլում էր կապոյտ երկնակամարի վրայ և հազարաւոր առւակներ վազում էին դէպի ցած ձիւնապատ լեռների և բլուրների վրայից: Տեսարանը խիստ հաճելի էր. սար ու ձոր ամբողջովին սպիտակել էր, միայն երևում էին սպիտակ սառնի վրայ տեղ տեղ գիւղացի մարդիկ, որոնք վինտում էին կնոջ և երեխայի դիակը: Յանկարծ նրանցից մէկը աղաղակելով ցոյց տւեց լեռան ստորոտում թշւառի մեռած դիակը, որն արդէն վազուց անշնչացած սառել էր՝ ձեռքերը տարածած օգնութիւն ապասելով:

Մինչև կէսօր երեխային էլ գտան, բայց բոլորովին ապահով վիճակում՝ ժայռի խոռոչում: Կնոջ անձնազոհութիւնը դէպի իր զաւակը մեծ հիացում և ցաւակցութիւն առաջ բերեց ամեն տեղ: Նոյն երեկոյեան գիւղի քարոզիչը յայտնեց գիւղացիներին մասնակից լինել առաւօտեան թշւառի յուղարկաւորութեան տխուր հանդէսին:

Յիսուն տարի արդէն անցել էր այն օրից, այն տղան՝ որի համար մայրը տւեց իր կեանքը, այժմ մեռնում էր, ծերացած գինւորական պաշտօնով:

Մեռնելիս նա այսպէս ասաց՝ «Երբէք, երբէք չեմ մոռացել իմ մօրս ցոյց տւած մեծ սէրը, քաղցր և անմահ է եղել նրա յիշատակն ինձ համար, և այժմ իմ միակ վախեցն այն է՝ հանպիսա առնեն իմ ոսկորները յաւիտեան միայն նրա հողակոյտի կողքին:

Պար. Ե. Շահրիմեանց



*
* *

Կուշտ ես դու, մանկիկիկ:
Տամ սեմեռակի մէջ
Բոդէ հագուստը
Պահպանում է ձեզ
Կեմուսամաշ հովից:
Փառ տուր Աստծուն,
Որ քախտաւոր ես,
Բայց մի՛ մոռանար,
Որ ձեզ խնամող,
Բարեգութ Տէրը
Պարտ՛ էլ է դրել
Քեզպէսի վրայ՝
Կարեկից լինել
Խեղճին, կարօտին:
Անա՛, դուրս նայէ՛
Քո յուսամուտից,
Այնտեղ, ֆո դիմաց,
Պատին կոթնած,
Մի որբ երեխայ
Ցնցոտիներում,
Կիսամերկ մարմնով,
Մողոր աչերը
Յառել է անթարթ.
Քո շէնը, փայլուն,
Հարուստ տանն վրայ:

*Նրա մէջովը*
*Ի՞նչեր եմ անցնում,*
*Դու գիտե՞ս արդեօք,*
*Գիտե՞ս, որ խեղճը*
*Կարօտ է հիմա*
*Մի պատառ հացի:*
*Տե՛ս, անո՛ւ նրա*
*Տխուր աչերից*
*Երկու մեծ կաշկամ*
*Վայր գլորեցին,*
*Ու ասպիկ տրտից*
*Սառեցին կանգնած*
*Այտերի վրայ:*
*Ա՜հ, դշուռ է նա:*
*Նրա պէս շատեր*
*Կան դժբախտարար*
*Շուրջդ, աներե՛ս տեղ:*
*Սոմրե՛ աչքերի*
*Կարեկիցը լինիր*
*Այդպէս դշուռին,*
*Ու այն ժամանակ*
*Քո փոքրիկ սիրտը*
*Կըլցրի սիրով,*
*Իսկ սիրող տրտից*
*Թանիգ ոչինչ չկայ,*
*Հոգի՛ս, աշխարհում:*

Ծերուկ



# Մ Ե Ր Փ Ր Կ Ի Չ Ը

Ա

շնաբհի ամեն կողմ մայիսի և ապրիլի օրերն այնքան աիւորժելի են լինում որ, ոչոք չի ուզում նրանցից շուտով բաժանուել, որպէսզի տասն և երկու ամիսների այդ զեղեցկադոյնների բաժանումը մեզ շատ տխուր դրութեան մէջ չդնէ, աշխատում ենք կարելի եղածին չափ վայելել դրանց, դնալով դուրս բացօդեայ տեղեր։

Հէնց մի այդպիսի զեղեցիկ պայծառ առաւօտ էր, երբ հինգ վեց ընկերներով հրաման առանք մեր ծնողներից դաշտ դնալ և այնտեղ անցկացնել այդ օրը։ Իւրաքանչիւր ոք մի-մի ծրար շալակած մեր քայլերն ուղղեցինք դէպի հանդիպակաց զեղեցիկ, փոքրիկ վտակը, որի հոսելու ձայնը հեռից արդէն սկսեց, որպէս ճպնիսի մի կտոր, աստ-աստ մեզ իրան քաշել։ Ըրևը թէև մի քիչ անտանելի էր դառնում իր սաստիկ ջերմութիւնով, բայց այդ մասամբ մեղմացնում էր զով զեփիւռը։ Վերջապէս հասանք վտակի մօտ և սկսեցինք նրա կուսական, կենսատու ջրով լանալ մեր երեսները—արդեօք ասացի թէ ճամբորդութեան աճապարանքի մէջ մեղանից ոչ մէկը զեռ իր երեսը լացած չէր։

Մի քիչ հանգստանալուց յետոյ սկսեցինք նախաճաշի պատրաստութիւնն անել։ Բոլորս էլ զբաղուել էինք. մեզանից մինը կրակ էր պատրաստում, միւսը կաթն եռացնում և մի ուրիշը խնճոյքի տեղը հարթարում։

—Հրամեցէք, տղերք, ձայն տուեց մեր ընկերը—սեղանապետը, ամեն ինչ կարգին է և պատրաստ, հրամեցէք ճաշելու։

Հազիւ երկու վայրկեան յետոյ բոլորս էլ ուրախ զարթ սեղանի շուրջն էինք դտնւում։ Իւրաքանչիւր ոք հպարտութիւն էր զգում երբ սեղանի վրայ էր գալիս այն կերակուրն, որ ինքն էր պատրաստել։ Եւ ինչ մեղքս ծածկեմ, ես էլ նոյնը զգացի երբ մէջ տեղ բերեցին իմ պատրաստած *քիշին* և փառաւոր կերպով ճաշակելուց յետոյ՝ բացականչեցին. «Տօ, մեր Ւսօն ուդա աղջի է դառել»։

Այո, բոլորս էլ հպարտ էինք, որովհետև մենք էինք պատրաստել ամեն ինչ, մենք էինք կրակը վառել, մենք՝ կաթը եռացրել, մենք՝ կերակուրները եփել, և վերջապէս մի քիչ էլ անշուշտ քրտինքի նման մի բան էր հոսել մեր ճակտից այդ բոլորն անելու համար։ Բայց երբէք մեր մտքերը չէր անցնում թէ հապա, որքան աւելի հպարտանալու իրաւունք ունին մեր մայրերը, երբ ամեն օր կատարում են այն, ինչ մենք միայն մէկ օր ենք արել։

Յանկարծ մեզանից ոչ այնքան հեռու, լսեց մի ինչոր շփշփոց. ամենքս էլ բերաններս լիքը կերակուրով դիմեցինք դէպի ձայնը, ուր մեր առաջին պարզուեց մի տեսարան, ոչ այնքան հետաքրքրական, որքան ցաւալի։

Մի ահագին արծիւ իջել էր որսալու մի օձ, բայց երևի սպիկար դտնելով՝ օձն առիթ էր ունեցել փաթաթելու նրա աջ թևին և վզին, և այսպէս երկուսն իրար գրկած թաւալ-ւում էին գետնի վրայ։ Արծուին անկարելի էր ճողոպրել օձի պաշարումից. այս անգամ ճակատագիրը փոխուել էր և որսը տիրացել էր որսորդին։

Ողսրմելի թռչունը հետզհետէ թուլանում էր, իր ուժերը չլսւում էին և զուցէ շուտով խեղդամահ գետին կը-պլորւէր, եթէ մեր ընկերներից մինը ազատարար հրեշտակի

նման վրայ չըհանէր և դանակի հարւածով չըկտրատէր օձի վիզը։ Արծւին ազատ թողեցինք որ թռչի և մենք կրկին բոլորւեցինք մեր լքած սեղանի շուրջը, բայց վոխանակ արծիւը թռչելու, սկսեց օդի մէջ տարօրինակ պտոյտներ գործել. երկար ժամանակ շարունակում էր իր խաղերը. մենք այլ ևս ուշադրութիւն չդարձրինք իրան՝ զբաղւած մեր կեր ու խումով։

—Ա՛յ անշնորհք թռչուն, ձայնեց յանկարծ մեր ընկերներից մինը, տեսաք ինչ անպիտանութիւն արեց թշւառականը։ Մենք իրան կեանք պարգևեցինք, իսկ ինքը դրա փոխարէն մեզ կաթից զրկեց։

—Նախապէս օդին մէջ *օյիններ* արեց, իսկ յետոյ էլ մեր գլխին, ծիծաղելով պատասխանեց մի ուրիշը։

Արծիւը օդի մէջ շրջաններ գործելուց յետոյ, մեր զբաղւած միջոցին, արագ թռիչքով ցած է սլանում և իր մագիլներով բերնի վրայ է շրջում այն կաթսան, որի մէջ գտնւում էր մեր կարևոր ըմպելիներից մինը—եռացած կաթը, և կրկին վեր բարձրանում։

Մեր բարկութիւնն այլ ևս անչափ էր. ձրտեղից և ով պէտք է կրկին գնար քաղաք այս տաքին կաթ բերելու, այդ մի կողմից՝ իսկ թռչունի ապերախտ ընթացքը միւս կողմից սրտնեղում էր մեզ։ Եթէ կարելի լինէր, ճիշտն ասած, կրկին թռչունը կըբռնէինք և օձի անողորմ կաշկանդումներին կըյանձնէինք։ Թող գնար այնտեղ մի անգամ ջաննաթի համն առնէր և այնպէս մեր գլխին խաղ փորձէր։

Բայց մի քանի րոպէ յետոյ մի զարմանալի յայտնութիւն մեզ զգացնել տւեց որ բոլորովին սխալւում էինք մեր ասածների և խորհածների մէջ։

Կաթսան վերցնելուց յետոյ, նրա յատակին գտանք այն թռնիաւոր օձի գլուխը, որ մի քիչ առաջ կորատեց մեր ընկերը։ Անպիտանը կամաց կամաց սողալով մինչև այնտեղ է հասել և ինքն իրան տաք կաթսայի մէջ գցել։ Արծիւը վերեւից երևի հսկելիս է եղել օձին և երբ տեսնում է թէ կաթի մէջ ընկնելով մեզ վտանգ է սպառնում, վրայ է հասնում և տապալում կաթսան։

Ճիտակն ասած, մինչև այսօր էլ չեմ իմանում թէ օձն

արդեօք մեզանից վրէժ լուծելու համար եկել ընկել էր կամասայի մէջ, թէ նրա մէջի կաթը խմելու։ Երկուքն էլ կարելի էր ենթադրել, որովհետև օձը, ասում են, թէ խորամանկ և վրէժխնդիր է և թէ միանգամայն կաթ սիրող. բայց այդ չէր հետաքրքրում մեզ, մենք մեր բոլոր ուշադրութիւնը, խորհուրդը սևեռել էինք մի քիչ առաջ մեր նախատած թուչունի վրայ, որ այնքան իմաստութեամբ և ճարպիկութեամբ ապատեց մեր բոլորիս կեանքը։

Եւ այժմ ուրախ եմ, որ առիթ ունիմ, ի դիմաց իմ բոլոր ընկերներիս, «Աղբիւրում» հրապարակաւ իմ խորին երախտագիտութիւնս յայտնել մեր Փրկիչ-Արծուին, որին պարտական ենք մեր կեանքերը։ Բայց որքան ցաւում եմ, որ նա չէ կարող կամասային նման շրջել «Աղբիւր»ի էջերը։

Ա. Օ-ճան

Աղեւոր՝ ի տես մահուան ընկերի



## ՀԷՁՆԷՒՁ

—

*Եւ դաշտ եւ անտառ կանաչ են հագնում,*
*Առուն, խնդագին երգում թռչնակներ,*
*Եւ անհուն ճիշդանիվ շլում է օդում...*
*Ե՞ւ ո՞վ կդիտանեն գարնան պարզ օրեր:*

*Գարնան հետ անուշ ես էլ զարթնի*
*Եւ թօթափնի իմ դաժանութիւն.*
*Թռչնոց երգերով ոգեւորնի,*
*Երգում եմ տխուր երգասացութիւն:*

*Ինձ կարեկցութեամբ հարցնում է սարեակ.*
*«Ինչո՞ւ է քո երգն անխթին, վշտալից»:*
*—Վաղուց է արդէն, ո՛ ազատ թռչնակ,*
*Այդ երգը ծնել անբախտութիւնից:*

*Քանի տարիներ հինչեցրել է այն*
*Դաշտեր, ծառաստան, անտառ եւ պարտէզ...*
*Քո տատն էլ, սարեակ, չեղ է հրան,*
*Մի՛թէ չգիտես...*

**Սիմ. Պապիեան**

## «ՄԱՐԻԱՆԷ» ՄԵՆԱՍՏԱՆԸ

**Կառմէն-Սիլուայից**

—

Անցել են այն օրից շատ շատ տարիներ և Սուրխաթի տափաստանը զարդարող երկու փոքրիկ վանքերից այժմ մնացել են մամռապատ պատերի բեկորներ, որոնք ներկայում ողբում են միայն իրանց վաղանցուկ փառքը...

Սրանից շատ դարեր առաջ, թաթարական հզօր խաներից մէկը՝ Ղրիմ Գիրէյ, ապրում էր Հին Ղրիմ քաղաքի «Խանսարայ» կոչուած շքեղապարդ և հոյակապ պալատում, որի ամուր պարիսպներն ու քանդակների բազմաթիւ բեկորները մինչև այժմ էլ թաւալւում են նրա աւերակից բլրակները կապող կոյտերի մէջ։

Հզօր և հարուստ էր խանը, նրա հսկայական պալատի պատերն ամբողջապէս զարդարւած էին ոսկէ փայլուն դրամներով ու թանգագին ադամանդներով, իսկ յատակը սփռւած էին ամենաթանգագին գորգերով և շալերով։ Խանը յայտնի էր իր արշաւանքներով, նա սարսափ էր տարածում իր շուրջը, նրա ձայնը նոյն իսկ մինչև Մոսկւա էր հասնում, որի մասին այնտեղ տարօրինակ լեգենդաներ էին պատմւում։ Գիրէյը սիրում էր պատերազմ, կռիւ, նա ինքն անձամբ էր ճանապարհ հարթում իր արիւնաբուղ աւազակների համար և ամեն անգամ արշաւանքից վերադառնալիս, նա միշտ իր հետը բերում էր հարուստ աւար և գեղեցիկ աղջիկներ, իր ընդարձակ և հոյակապ հարէմը չքնաղ հուրիներով հարստացնելու համար։

Երբ նա իր շքախմբով պալատից դուրս էր գալիս, նրա

դեղեցիկ ձիաների սարքը կատարելապէս կուրացնում էին տեսնողի աչքերը. իր թամբի ասպանդակներն ու սանձը՝ ամենամաքուր, անխառն ոսկուց էին, իսկ թամբն ու փողքաշը, ամենաթանգագին արհեստից: Եւ երբ Դիրէյը իր շքախմբով երևում էր, նրա հպատակները կարծում էին թէ Ղրիմ երկրի վրայ մի ուրիշ արև ևս ծագել է: Նրա շքախմբի մէջ գտնւում էր և մի ռումինացի դեղեցիկ երիտասարդ, որին Դիրէյը բերել էր իր մօտ Սուչաւայից՝ այնտեղ կատարած սոսկալի արշաւանքներից վերադառնալիս: Երիտասարդը այն ժամանակ դեռ փոքր մանուկ էր:

Նրա արտաքինը չափազանց դեղեցիկ էր, հասակը բարձր և ճկուն, խուճուճ վայլուն մազերն ու սև աչքերը մի առանձին գրաւչութիւն էին տալիս նրա դէմքին: Բայց նրա աչքերի արտայայտութիւնը չափազանց թախծալի էր. նա շարունակ մտածում էր իր ծագման, իր ծնողների մասին և սակայն չէր կարմէկը, որ կարողանար նրա այդ հետաքրքրութիւնը բաւականութիւն տալ: Դիրէյը նրան յափշտակել էր մի չափազանց դեղեցիկ կնոջ գրկից, որին տեղն ու տեղը սպանել էր՝ խրելով իր սրածայր խանչալը նրա կուրծքը. պատճառ, որ կինն անդադար բղաւում և լաց էր լինում: Խան ինքն էլ չէր իմանում, թէ այդ կինն երեխայի մայրն էր թէ դայակը:

Նա օտարական էր, ընկեցիկ, սակայն նրան թւում էր, թէ երեխան անշուշտ ազնուական ցեղից պիտի լինի:

Մի անգամ երեկոյեան նա կանգնած էր Խան-Սարայի բազում և արմունկով յենւած իր արաբական նժոյգի վրայ, խորասուզւել էր տխուր մտածմունքների մէջ, իսկ նրա հաւատարիմ նժոյգը ժամանակ առ ժամանակ ծռում էր իր դեղեցիկ գլուխը տիրոջ կողմը և երեսով շոյում նրա ուսերը՝ ի նշան իր անձնւիրութեան:

Նա հեռու տեղից էր վերադարձել. այժմ կանգնած սպասում էր Թոյլտւութեան իր խանին ներկայանալու և իր կատարած ճանապարհորդութեան մասին մանրամասն զեկուցում տալու համար: Իր մտահայեաց աչքերը նա դարձրել էր դէպի շատրւանը, որը լուսնի աղօտ լոյսի տակ մեղմիկ ու հանդարտ կարկաչում էր:

Ձրեղազարդ պալատի կէսը ծածկւած էր թափանցիկ խաւարով, իսկ միւս կէսը—ընդհակառակը, լուսաւորւած էր լուսնի վայելուն լուսով։

Երիտասարդ բռւմինացին իր անտարբեր և ցրւած հայեացքը սեւեռել էր պալատի պատուհանների ոսկեզօծ վանդակների վրայ, որի յետևում պահւած էր Ֆիրէյի ամբողջ հարէմը։

Շատ հետաքրքիր պատմութիւններ էին անում այդտեղ բանտարկւած սուրկուհիների մասին, որոնց թիւը հետզհետէ աւելանում էր հզօր Ֆիրէյի հարէմում։

Սակայն երիտասարդ ջրիատոնեան սարսափով էր մտաբերում այդ հուրիներին, և նրանց մասին մտածելիս աւելի ևս խորասուզւում էր տխրապատում խոհերի մէջ և, այդպիսի վայրկեաններում, հայրենիքի կարօտը նրան աւելի տանջում, մաշում էր։

Այդ րոպէին յանկարծ պատուհաններից մէկի վանդակը կիսով չափ բացւեց և այնտեղից առանց երեսակալի երևաց մի չափազանց գեղեցիկ աղջիկ։

Երիտասարդն երբէք չէր տեսել այդ աստիճան հմայիչ գեղեցկութիւն։ Դրսից գեղեցկուհուն լուսինն էր լուսաւորում, իսկ ներսից՝ լամպարի կարմրագոյն անդրադարձումը։ Նա ամբողջ մարմնով սկսեց դողալ, որից զարմացած նժոյգն անգամ իր գլուխը բարձրացրեց և լայն բացարեց քթածակերը, կարծես զգալով, որ իր երիտասարդ տիրոջը սպառնում է մի մեծ վտանգ։

Գեղեցկուհին և երիտասարդն իրար վրայ էին մեխել իրանց անթարթ հայեացքները, որը կարծես կատարւում էր մի աներևոյթ զօրութեան կաշկանդումով։

Այդ րոպէին սանդուխքի աստիճանների վրայ լսեցին ոտնաձայներ, պատուհանի վանդակը իսկոյն ծածկւեցաւ և երիտասարդին ներս կանչեցին։

Երկրորդ երեկոյեան երիտասարդը կրկին եկաւ շատրւանի մօտ և կրկին պատուհանում երևաց գեղեցկուհին։ Իսկ երրորդ երեկոյեան գեղեցկուհին դուրս հանեց գլուխը և մեղմ ձայնով ասաց.

—Եթէ դու քրիստոնեայ ես, ազատիր ինձ։ Իմ անունը Մարիանէ է։

—Ես կազատեմ քեզ, և այդ այնքան հաստատ և ճիշտ է, որքան իմ քրիստոնեայ լինելը. իսկ իմ անունն է Եօհան։

Եւ գեղեցկուհին արագ փակեց պատուհանը։

Հետևեալ օրը Դիրէյը պատրաստւում էր գնալ նորանոր արշաւանքներ գործելու։ Նա իր գլխին ծածկած ունէր մորթէ գլխարկ, որի վրայ զարդարած էր հրափայլ աղամանդեայ կիսալուսինը։ Նա նստած էր իր թանգագին նժոյգներից մէկի վրայ, որին հանգիստ չէր թողնում և ստիպում էր կեն-դանուն երկու ոտքերի վրայ կանգնել։ Նա իմանում էր, որ վանդակների յետևից իր կանանց և ստրկուհիների աչքերը սևեռած են իր վրայ, մանաւանդ նրա համար առանձնապէս նշանակութիւն ունէր նրանցից ամենագեղեցկուհու հայեացքները—դա այն Մարիանէն էր, որին Դիրէյը մեծացրել էր յատկապէս կնութեան առնելու համար։ Նրա չքնաղ գեղեցկութեան լուրը շատ հեռուներն էր գնացել և Դիրէյի թշնամիներից շատ շատերը մտածում էին յափշտակել նրա ձեռքից այդ անգին ոսկը։

Մարիանէին խոպան արգելւում էր առանց երեսակալի երեսալոյն իսկ պալատականներին, որի համար նրան պատրաստ էին ամենախիստ պատիժների ենթարկել. նրա քնքոյշ տապանները պիտի ենթարկւէին անխնայ փայտահարութեան, իսկ նրա այնքան գրաւիչ գեղեցկութիւնը պիտի մատնւէր խաւար ու մռայլ բանտի յաւիտենական թագաւորութեան։

Նրա մեծ ու հրացայտ աչքերը, ճիշտ է, վանդակից դուրս նայում էին սակայն ո՛չ Դիրէյի վրայ, դէպի որը նա տածում էր ատելութիւն և սարսափ, այլ Եօհանի վրայ, որի պատկերը նա պահում էր իր սրտի ամենախորունկ պահարանում։

Ընշաւանքն այս անգամ տևեց ամբողջ երեք շաբաթ և, բեռնաւորւած հարուստ աւարով՝ թաթարները վերադարձան Խան-Սարայ։

Եօհանը կատարել էր մի մեծ քաջութիւն և ազատել էր Դիրէյի կեանքը մահւան ճիրաններից, խանի վրայ իր սուրը իջեցնող թշնամու գլուխը՝ նա սրի մի հարւածով ջախջախել էր։

Վերադառնալուց յետոյ խանն կանչեց իր բոլոր քաջարի-ներին և վարձատրեց նրանց այնպէս, ինչպէս վայել էր քա-ջութիւնը գնահատող մի իշխանաւորի։ Բոլորից յետոյ նա դարձաւ Եօհանին և ասաց.

—Իսկ դու, որդիս, դու կատարել ես մեծ քաջութիւնը, չկայ մի պարգև, որ համապատասխանէը քո արժանիքին։ Սակայն գուցէ դու ունիս մի որ և է ցանկութիւն, որ ես կա-րող եմ կատարել, ասա, ես կըկատարեմ այն, ինչ որ կուզես, տալիս եմ քեզ իմ իշխանական ազնիւ խօսքը։

Այն ժամանակ Եօհանը խփեց ասպանդակներով իր նը-ժոյգի կողերին։ Հասկանալով նշանի իմաստը՝ նրա խելօք կեն-դանին ծունկ չոքեց խանի առջև, իսկ Եօհանը բարձրաձայն գոչեց.

—Եթէ դու, հզօրազոյն տէր, ցանկանում ես կատարել իմ սրտի բաղձանքը, աղաչում եմ քեզ, տուր ինձ քո ե-րուհիներից մէկը՝ քրիստոնեայ Մարիանէին։

Մեռելային լռութիւնը կաշկանդել էր բոլորին։

Ամենքը սարսափով նայում էին Դիրէյի վրայ, որի երեսը կարմրում այրւում էր, շրթունքե՛րը կրծոտելով քաշքշում էր իր բեղերը։

—Մի թէ դու նրան տեսել ես, ճանաչում ես, հարցրեց վեր-ջապէս խանը։

—Ո՛վ չէ ճանաչում Մարիանէին, տէր։ Սակայն ես խըն-դրում եմ տալ ինձ ոչ թէ նրա համար, որ նա գեղեցիկ է, այլ որ նա՝ քրիստոնեայ է։

Կրկին լռեց Դիրէյը։ Երևում էր որ նրա սիրտը տանջւում էր նեղքին մի սոսկալին կռւից։ Սակայն զսպելով իրան՝ նա բացականչեց.

—Ես կըպահեմ իմ տւած խօսքը, այսօր կըլինի քո հար-սանիքը։

## II

Մարիանէն բոլորը լսում էր։ Նա կանգնած էր վանդակ-ների յետևում և հազիւ էր շունչ քաշում, նրա գեղեցիկ երե-սը մերթ դունատւում էր, մերթ կարմրում, կրւծքն էլ սաս-տիկ պոռոտ էր գալիս։

Նա ընկաւ գետին և ծնկաչոք ջերմ շնորհակալութիւն յայտնեց Աստծուն, որ ազատեց նրան իր այդ ամօթալի ու սարսափելի դոյութիւնից, պարգևելով մի մեծատոդի և քրիստոնեայ ամուսին:

Այժմ նա ազատուեց չարաճճի պառաւ կնոջ հակոյութիւնից որը իրը թէ նրա դաստիարակն էր, ազատուեց և հարէմի միւս կանանց չար նախանձից ու նախատինքներից:

Այժմ նա կըլինի իր սիրած միակ ամուսնու կինը:

Ջուտով կանչեցին քահանային, ղեղեցիկ հագնուած, ջահիլ ու կենսուրախ կոյսը դարձաւ քաջարի Եօհանի օրինաւոր կինը:

Երբ վերջացաւ կրօնական ծիսակատարութիւնը, երիտասարդ զոյգը հեռացաւ դէպի իրանց յատկացրած նոր սենեակը, որը, ամբողջապէս զարդարուած էր հնդկական և պարսկական ամենաթանգագին շալերով: Սենեակը մի կախարդական գեղեցկութիւն ունէր. առաստաղի մէջ տեղից կախուած էր մի մեծ լամպար, որի կարմրագոյն ազօտ լոյսը տարածւել էր ամբողջ սենեակում: Այդտեղ արտաքին ոչ մի ազմուկ չէր կարող ներս թափանցել և օդը այստեղ միշտ լի էր անուշ բուրմունքներով:

Ներս գալով սենեակ՝ Մարիանէն փաթւեցաւ իր ամուսնու վզով և հազիւ լսելի ձայնով շշնջաց.

—Ես սիրակ սիրեմ, պաշտեմ քեզ, որպէս մի սրբութիւն, որովհետև դու ազատեցիր ինձ խայտառակ կեանքից, ազատեցիր անարդ հեթանոսի ճիրաններից: Իմ հոգին ու շունչը քեզ են պատկանում:

Եօհանը քնքուշիկ սեղմեց նրան իր ուժգին բազկին:

—Դու ինձ համար աւելի թանգ արժես, քան իմ կեանքը, շարունակ կրկնում էր նա, և երբ նրանք մի փոքր հանգստացան, այն ժամանակ սկսեցին իրար պատմել իրանց կրած բոլոր տանջանքները, յիշեցին անցեալ տարիները և վերջապէս յիշեցին այն հեռաւոր ժամանակները, երբ նրանք յափշտակւած էին թշնամու ուժեղ ձեռքերով:

—Ո՞րտեղից են քեզ տարել, հարցրեց Մարիանէն:

—Սուչաւայից։

—Ինձ էլ են այնտեղից տարել, ես մինչև հիմա էլ յիշում եմ իմ դայեակի անունը, նա մի հայուհի էր և նրան կոչում էին Թագուհի։

—Իմ դայեակն էլ այդ անունն ունէր և նա ևս հայուհի էր...

—Ես ունէի երկու փոքրիկ եղբայրներ, որոնցից մէկի անունն էր Բոդդան, իսկ միւսի վրայ կար մի փոքրիկ սև բիծ, որին ես մատով խփում էի և ասում. «կասես մոշիկ լինի»։

Յանկարծ Եօհանը վեր ցատկեց տեղից, յենւելով պատին երկու ձեռներով՝ ծածկեց իր արտասուքից յորդացած աչքերը։

—Քեզ ինչ պատահեց, հարցրեց Մարիանէն անհանգստութեամբ, բարձրացնելով նրա գլուխը և նայելով նրա դէմքին։

Այն ժամանակ երիտասարդն ընկաւ ծնկաչոք նրա առաջը և ցոյց տալով իր պարանոցը, հարցրեց.

—Ահա, սա նա չէ։

Յուսահատական մի սուր ճիչ արձակելով Մարիանէն մի մի քայլ յետ արաւ. «Բայց... Դու չես»...

—Այո, ես քո եղբայրն եմ, ասաց Եօհանը։

Եւ նրանք միասին սկսեցին դառնապէս ողբալ։

Շատ էին աշխատում նրանք համոզել իրար, որ հարազատներ չեն՝ բայց այդ արդէն ակնյայտնի ճշմարտութիւն էր։

Նրանց բաժանել և տարել էին երկու իրար անծանօթ մարդիկ, և այնուհետև իրար մասին ոչ մի տեղեկութիւն չեն ունեցել։

Եւ որչափ ծանր ու ճնշող էր նրանց համար այդ դիշերը։ Նրանք շարունակ միայն բարև էին ասում իրար։

Երբ լուսացաւ առաւօտը, նրանք երկուսով գնացին Գիբէյի մօտ։

Մեծ զարմանքով ընդունեց նա երիտասարդ նորատեսակներին, որոնք խոնարհած իրանց ոսկու գլուխները՝ կանգնած էին անմռունչ։ Սակայն երբ նրանք պատմեցին սարսափելի դաղտնիքի մասին, խանը բացականչեց.

—Ուրեմն դուք պէտք է մնանէք։

—Այո, այդ մեր ջերմ ցանկութիւնն է, որովհետև կեանքն այսուհետև մեզ համար տանջանք է։

—Բայց չէ՞ որ դուք քրիստոնեաներ էք՝ ուրեմն թող նըրանք ձեզ դատեն:

Հրաւիրուած էր ամբողջ սինոդը, որը բաղկացած էր հոգևորականներից և աշխարհական դատաւորներից. նրանք վճռեցին, որ Մարիանէն և Եօհանը չըպիտի ենթարկուին մահուան պատժի, որովհետև դէպքը տեղի է ունեցել անդիտութեամբ, ուրեմն նրանցից իւրաքանչիւրը պէտք է կառուցանի մի մի վանք, որպէս զի կարողանայ քաւել իր մեղքերը:

Համակուած աննկարագրելի արտմութեամբ, նրանք քաշուեցին Սուրբ Աթեան տափաստանի հարաւային մասը, որտեղ և կառուցեցին երկու փոքրիկ մենաստաններ: Եօհանը իր մենաստանի անունը դրեց «Մարիանէ»:

Անցել են այն օրից շատ-շատ տարիները, սակայն այն երկու դժբախտ վանականների թողած յիշատակը Սուրբ Աթի մի բուռն ժողովրդի մէջ սերունդ է սերունդ ապրում է, թէև նրանց կանգնեցրած կոթողները—կառուցած մենաստանները արդէն վաղուց ողբում են իրանց վաղանցուկ փառքը...

Դրիմցի

# ՂԱԴԻ ԴԱՏԸ

(Անգլիերէնից)

Լայնատարած աւազոտ անապատի մօտ գտնւող փոքրիկ արաբական քաղաքի դարպասի շւաքում, նստած էր Իսուֆ անունով մի երեխայ, որը սրմաւավաճառ էր և նայում էր դէպի այն կողմը, որտեղից պէտք է քարաւան գար: Ուղտապանների սուր կոչիւնները աւելի և աւելի մօտ էր լսւում և շուտով բեռնաւորած ուղտերի մի երկար շարք ներս մտան բաց դարպասի միջով: Ուղտապաններն երեխայի մօտով անցնելիս նկատեցին նրան և դցեցին նրա առաջ մի քանի մանր դրամ:

Նրանցից շատերը խղճահարւած նայում էին փոքրիկ որբի վրայ, որի հայրը մի ժամանակ մի քանի ուղտերի տէր էր և շատ քարաւաններ ապահով կերպով էր անցկացրել աւազոտ անապատի միջով: Նա մի օր իր բոլոր հարստութեան հետ խեղդամահ եղաւ այն սարսափելի հողմերից, սամումներից, որոնք յանկարծակի բարձրանում են անապատի մէջ տեղը, կուրացնում, այրում և աւազակոյտով ծածկում են թէ մարդկանց և թէ կենդանիներին: Իսուֆի իղձն էր մի ուղտ ձեռք բերել և քարաւանի հետ ճանապարհորդել: Ծովազնացի որդին սիրում է ծովը, չընայելով թէ նրա հայրը խեղդւել է ծովի ալիքների մէջ. իսկ Իսուֆը ձգտում էր դէպի անապատը, թէպէտ և գիտէը, որ իր հօր մարմինը հանգստանում է դաւաճանող անապատի մի անյայտ մասում:

Իւրաքանչիւր օր կէսօրւայ ժամանակ, երբ վաճառականները փակում էին իրանց կրպակները, որ շաբ ժամերին հանդըստանան. փոքրիկ արմաւավաճառը դնում էր քարաւանի դարպասի մօտ և, մտածմունքի մէջ ընկղմած, նայում էր ընդարձակ աւազէ ծովի վրայ, որի մասին այնքան հրաշքներ էին պատմում։

Այժմ նայելով անցսող ուղտերի եռևից, նա մտածում էր, թէ արդիօք, կըկարողանա՞յ երբ և իցէ իր համար մի այդպիսի մեծ կենդանի դնել։ Մի ուղտապան ասաց նըրան, թէ ամենավատ ուղտը 100 ո՞կի արժէ, իսկ լաւն երկու անգամ թանգ։ Երեխան չեռքը տարաւ դէպի չալման, որի ծալքերի մէջ նա պահած ունէր իր միակ ոսկէ դրամը։ Ընդամենը մէկը։ Իսկ նրան որքա՜ն շատ էր պէտք։ Նա ժողովեց իր առաջը շպրտած պղնձէ դրամները և մտատանջ սըրտով դնաց քարաւանի եռևից, որը հասել էր արդէն մի նեղ փողոցի ծայրին։

Յանկարծ նրա բոբիկ ոտքը դէմ առաւ մի կարծր բանի, որը ընկած էր ճանապարհի փոշու մէջ։ Նա շտապով կռացաւ և վերցրեց մի կանաչադոյն մետաքսից գործած քսակ, որը լիքն էր փողով։

Փողոցը դատարկ էր։ Ոչ ոք չէր տեսել թէ նա քսակ էր վե՞ցրել։ Ոչ ոք չի գիտնալ այդ բանը, եթէ նա ինքը չասէ։ Պէտք է արդեօք ասել։

Նա վերադարձաւ կրկին դարպասի շւաքի տակ և նըստեց մտածելու համար։ Նա նստած էր բաւականին երկար ժամանակ, մտածելով, թէ ինչպէս պէ՞տք է վարւի և ջանքով պահում էր քսակը իր կրծքի վրայ։ Ի՞նչ ծանը է նա։ Իւսուֆը չէր համարձակւում բաց անել և համրել իր դանձը, բայց, նրա ծանրութեանը նայելով, նա հասկանում էր, որ նրա մէջ աւելի շատ փող կար, քան հարկաւոր է մի ուղտ գնելու համար։

Նա պէտք է ասէ՝

«Ի՞նչպէս կըվարւէր իր տեղը հայրը»։

Իւսուֆը իրան այդ հարցը տւեց և ստացաւ պատասխան, թէ՝

«Նա կրպտնէր քսակի տիրոջը»։

Այո, նա պէտք է պտնի քսակի տիրոջը, նա պէտք է այդ անէ։ Իսուֆը վեր կացաւ և վազեց փողոցով։

Նա չըգիտէը թէ քսակը ով է կորցրել, բայց ենթադրում էը քարաւանի մէջ պտուղներից մէկին։ Պէտք է առաջ նրանց հարցնել։

Բայց քարաւանին հասնելուց առաջ, փողոցի մէջ երևաց մռնետիկը, բարձրահասակ մի պատկառելի տաճիկ, բոցափոյն չալման գլխին և ծագկազարդ հնդկական կերպասից կարած լայն զգեստը հագին։ Նա բռնած ունէր ձեռքին մի երկար փայտ, որը, աւելի ուշադրութիւն դրաւելու համար, ամեն մի քայլափոխին զարկում էր գետնին։

—Լսեցէք, լսեցէք, լսեցէք, բոլոր ազնիւ մարդիկ, ձայնում էը նա։—Վաճառական էբն-Ազիզը երկու հարիւր ոսկով լիքը մի քսակ է կորցրել։ Նա առաջարկում է իբրև պարգև կէսը տալ նրան, ով վերադարձնէ նրան նրա քսակը։ Լաւ է կէսը տանել և ազնիւ մարդ մնալ, քան թէ բոլորը ունենալ և դող լինել։ Արդեօք ձեզանից մէկը չէ գտել մի քսակ, մի քսակ 200 ոսկով։

Իսուֆը նրա խօսքը կտրեց։

—Ես եմ գտել քսակը, ասաց նա, հանելով ծոցից։ Ահա ձեզ։

—Հետևիր ինձ, պատասխանեց մռնետիկն և էբն-Ազիզը քեզ կըպարգևատրէ։

Արդէն մի փոքր ամբոխ հաւաքւել էր նրանց շուրջը և մռնետիկը ճանապարհ բաց անելով, առաջ գնաց փողոցով Իսուֆի հետ, նրանց ետևից գնացին և մի քանի դատարկապորտներ։ Գտնուեցին ճարպիկ մարդիկ, որոնք առաջ վազեցին և յայտնեցին էբն-Ազիզին զուրկան լուրը։ Փողոցով անցկենալիս խումբը լսում էր, որ ամեն կողմից նրա անունն էին տալիս։

—Արմատավաճառ Իսուֆը էբն-Ազիզի քսակը գտել է, գոռում էր մէկը։

—Նա կրստանայ 100 ոսկի, ասում էր միւսը։

—Նրան խոստացել են 100 ոսկի, ընդմիջեց երրորդը,

բայց ես լաւ եմ ճանաչում այդ ժլատ էքն-Ազիզին, նա կըմեռնի աւելի յօժարութիւնով, քան թէ կըզրկւի իր մի ոսկուց։

Հինգ րոպէ անցած, նրանք արդէն էքն-Ազիզի կրպակի առաջն էին, նա իրաւի, որպէս ասում էին ամբոխի մէջ, չափազանց ժլատ մարդ էր։

Իմանալով, որ նրա քսակը գտնւել է, նա հիմա մաշում էր իր ուղեղը, որ մի հնար գտնի պարգևը չըտալու համար։ Բայց ինչպէս երևում էր, ամբոխը կարեկցում էր երեխային և բարկացոտ ձայներ գոռում էին վաճառականին՝

—Դէ, ծեր ժլատ, ահա քո քսակը, տուր երեխային խոստացածդ։

—Կամաց, կամաց, շշնջում էր ժլատ ծերուկը։ Պէտք է դեռ տեսնել, թէ այստեղ է իմ բոլոր կորցրածս։

Նա մեկնեց ձեռքը քսակին։ Իւսուֆը տւեց նրան։

—Լաւ, ասաց վաճառականը, բռի մէջ ոսկիները սեղմելով և բարկացած նայելով իր խոժոռած յօնքերի տակով Իւսուֆի վրայ։

«Այդ դեռ երեխայ է և մի խղճուկ, մտածում էր նա նոյն միջոցին։ Ես նրա ձեռքից հեշտ կազատւեմ»։ Եւ նա քըսակը բաց արեց։

—Համրէ՛ փողը, բղաւում էր ամբոխը։ Կէսը քեզ և կէսը երեխային։

Վաճառականը իր ոսկրոտ ձեռքը քսակի մէջ դրած, ոսկիները խառնում էր։

—Ա՜, անպիտան, յանկարծ բացականչեց նա, կեղծ զըրզրումունքով։ Ձմրուխտը։

—Ձմրուխտը, վնթվնթաց Իւսուֆը։

—Այո՛, ձմրուխտը, գոռաց էքնը, կոպտաբար բռնելով երեխային և նրա ուսը թափ տալով։ Ըմտածես ինձ խաբել։ Դու վերադարձրիր ոսկին, բայց թագցրիր ձմրուխտը, իմ անգին ձմրուխտը, որը չնչին քսակից աւելի արժէ։ Ո՜հ, անբախտս։ Իմ ձմրուխտս, իմ ձմրուխտս։ Ի՞նչ ես արել ձմրուխտը, գող, մուրացկան։

Իւսուֆը պոկ եկաւ նրա ձեռքից և բացականչեց, նայելով վառւած աչքերով ծերունու վրայ.

—Ես դող չեմ և ոչ մուրացկան։ Ես քեզ տալի քսակը և չըդիտեմ նրա մէջ ինչ կայ—ես նրան չեմ բաց արել։ Եթէ դու չես ուզում ինձ պարգև տալ, Աստուած քեզ դատաւոր, ինձ պէտք չէ։ Եւ նա շուռ եկաւ, որ հեռանայ։

—Ինա, ասաց էբենը, բաւական մնալով իր հնարքից, և փառք տուր Աստծուն, որ այդպէս հեշտ պրծար։ Ես ներում եմ քեզ յիշատակ քո հանգուցեալ հօրը։ Ես չեմ ուզում նրան անպատուել։

Բայց մունետիկը կանգնացրեց երեխային։

—Կաց, բղաւեց նա և դարձաւ վաճառականին։—Դու չես կարող ոչ ներել, ոչ պատժել, ասաց նա։ Քեզ այդպիսի իրաւունք ոչ ոք չէ տուել։ Եթէ երեխան աղնիւ է, նա պէտք է իր պարգևը ստանայ, իսկ եթէ նա, ինչպէս դու ես ասում, գող է, նրան պէտք է գողի պէս պատժել։ Գնանք բոլորս Ղադիի մօտ դատելու։

—Ղադիի մօտ դատելու, Ղադիի մօտ, կրկնում էր ամբոխը։

Երբ եկան Ղադիի մօտ, նրանք պատմեցին իրան գործը։ Իւսուֆը պատմեց, թէ ինչպէս գտաւ քսակը և առանց նրան բաց անելու վերադարձրեց Էբեն-Ազիզին։ Վաճառականը պնդում էր, թէ քսակի մէջ, բացի ոսկին, մի շատ թանդագին զմրուխտ կար։

—Քեզ ինչ էին հրամայել բղաւելու, հարցրեց Ղադին դառնալով մունետիկին։

—200 ոսկով լիքը քսակի մասին։

—Իսկ զմրուխտի մասին ոչինչ չէր ասած։

—Ոչ, ասացին միայն քսակի մասին։

—Էբեն-Ազիզ, ասաց Ղադին, եթէ ինչպէս դու ես ասում, քո քսակի մէջ զմրուխտ կար, ինչու ուրեմն դու չըպատուիրեցիր իմաց տալ և նրա մասին։

Գոհութեան մի շշունջ դուրս եկաւ ամբոխի միջից, բայց վաճառականի պատասխանը պատրաստ էր։

—Պարոն, ասաց նա, զմրուխտը մեծ էր, բայց կոկած չէր։ Ես յոյս ունէի, թէ ով որ գտնի քսակը, չի հասկանալ զմրուխտի գինը։ Շատերը կարող էին վերադարձնել քսակը,

որ ստանան փողի կէսը։ Իսկ եթէ ես յայտնէի զմբուխտի պինը, ոչ ոք չէր ուզենալ վերադարձնել ինձ և ամենայն դէպս ես հարկադրւած կըլինէի մեծ պարգև նշանակել։

—Տեսնում ես, ինչ ժլատն է, կոչեց մէկ մարդ։

Էրն-Ազիզը ժպտաց։ Նա հոգս չէր կրում, թէ մարդիկ ինչ կըմտածեն, միայն թէ հաւատան նրա մեկնութեանը, իսկ այդ բանը յաջողւեց։

—Երեխայ, ասաց Ղադին դառնալով Իւսուֆին, դու զմբուխտը տեսե՞լ ես։

—Ոչ, պարոն, ինձ ոչինչ յայտնի չէ նրա մասին։

—Խուզարկեցէք դրան, հրամայեց Ղադին։

Երկու մարդ իսկոյն բռնեցին Իւսուֆին և քննեցին նրա հագուստը։ Ձալմի մէջ պահած ոսկին գնկալով յատակի վրայ ընկաւ։

—Ահա, բացականչեց Էրն-Ազիզը։ Նա, ինչպէս դուրս է գալիս, օգտւել է արդէն քսակով, իսկ առաջ երդւում էր թէ քսակը չէ բաց արել։

—Դա իմ փողս է, ձայն տւեց Իւսուֆը։

—Քո փողն է, ընդմիջեց Էրնը։—Ո՞րտեղից մուրացկանը կարող է ոսկի ունենալ։ Դրանից յետոյ, դուցէ ասես որ զբմբուխտն էլ քոնն էր։

Ըստ երևոյթին ամբոխը սկսեց Էրն-Ազիզի կողմը դառնալ։ Ղադին նայում էր երեխա՞յի վրայ, յօնքերը. խոժոռած։

Բայց Իւսուֆին պաշտպան դուրս եկաւ նրա հօր բարեկամը։

—Պարոն, ասաց նա, երեխան ճշմարիտ է ասում։ Ես ինքս անցեալ շաբաթ տւի նրան այդ ոսկէ դրամը նրա սըրընձէ դրամների փոխարէն, որ նրան հեշտ լինի պահել իր փոքրիկ դանձը։

—Դու ո՞րքան ոսկէ դրամ ունես քսակիդ մէջ, Էրն-Ազիզ, հարցրեց Ջաաֆին։

—Ես... ես չեմ համարել, վնդվնդաց վաճառականը։

—Ուրեմն համրէ հիմա։ Կա՛ց, այնպէս համրէ, որ ես տեսնեմ։

Վաճառականը փռեց ոսկիքը Ղադիի առաջ և դողդոջա-

լով ձեռքերով սկսեց ոսկիքը մէկ մէկ քսակի մէջ դնել։ Ոսկին 200 հատ էր, ոչ մէկը չէր կորել։

Այն ժամանակ Ղազին դարձաւ իր մօտը նստած պրադիրներից մէկին և թելադրեց նրան իր վճիռը, որը պրագիրը արձանագրեց խոշոր տառերով։

Յետոյ Ղազիի տւած նշանով, պրագիրը տեղից բարձրացաւ և ձեռքը մեկնելով, որ բոլորը լսեն, բարձրաձայն ասաց.

—Յանուն Աստուծոյ, լսեցէք ճշմարտասէր Ղազիի վճիռը։

Հանդիսականները մօտիկացան դատաւորին։ Էբն-Ազիզը գաղտագողի նայում էր Ղազիի երեսին, բայց չընայելով իր խորամանկութեանը, չկարողացաւ նրա երեսի վրայ նշարել որ և իցէ զժգոհութեան կամ անբաւականութեան նշան։

—Ուշադրութիւնով լսիր ինձ Էբն-Ազիզ, ասաց Ղազին։ Ես պատասխանից է կախւած իմ վճիռը։ Բայց զգացիր, որ նրանից ևս կախւած է այս որբ-երեխայի պատիւը, այդ պատճառով պատասխանելուց առաջ մտածիր։ Համոզւած ես դու, որ քո կորցրած քսակի մէջ զմրուխտ կար։

—Աստւած լինի ինձ դատաւոր, պատասխանեց Էբնը,—ես համոզւած եմ որ կար։

—Այն ժամանակ գործը հեշտ է վճռել, ասաց Ղազին, ես չեմ կարող քո խօսքերին չհաւատալ։

Վաճառականը խոնարհաբար ողջունեց որ թագցնէ իր սքանչացած ժպիտը։

—Բայց ես նոյնպէս չեմ կարող, շարունակեց դազին հանդիստ ձայնով, կարծիք տանել Իւսուֆի խօսքերի վրայ, որը յայտնի է շատերին, որպէս ազնիւ և ճշմարտասէր երեխայ։

Էբն-Ազիզը ձգւեց յանկարծ։ Ժպիտը վախաւ նրա երեսից։

—Ահա իմ վճիռս, ասաց Ղազին։ Որովհետև քո քսակի մէջ, Էբն-Ազիզ, զմրուխտ կար, իսկ Իւսուֆի գտած քսակի մէջ զմրուխտ չկայ, ուրեմն նշանակում է՝ նրա գտած քսակը քոնը չէ։ Այս պատճառով, ես հրամայում եմ վերադարձնել քսակը նրան գտնող Իւսուֆին, իսկ քեզ, Էբն-Ազիզ, ես խորհուրդ կը

*տայի հրամայել մի անգամ էլ բարձրաձայն յայտնել փողոցներում քո կորուստի մասին, զուցէ քո քսակը դեռ ևս գտնուի։*

—

*Մի շաբաթ անցած, մի շարք բարձած ուղտեր դուրս էր գնում քարաւանի դարպասից և ուղղւում էր դէպի անապատը։*

*Այստեղ էր և Իւսուֆը՝ նրա իղձը կատարւեցաւ և նա զոհոզ դէմքով քայլում էր իր ուղտի կողքին, որին նա համարում էր աշխարհիս երեսին ամենադեղեցիկ կենդանին։*

Ե. Զ.



## ՀԻՑՆԻՑ

—

Արեւի շողեր, վարդ ու աղաւնեակ, չմեռնիկ շուշան—
Ես սիրում էի ամբողջ կրճոլըս երբեմն անսահման՛ը.
Այժմ սառել եմ եսիդէպի ցուրցը—եւ լի ես սէկով,

Ալ Douglas

Այն է՝ հարազատ, սիրուն ու ճնճուղ, անուշ զաւակով.
Ես այդ մանկան մէջ ամենը գտայ—իմ սիրած տենչե՛ր,
—Չմեռնիկ շուշան, վարդ ու աղաւնեակ, արեւի շողեր:

Պ. Պարսուրեանց

# ՁԻԱՐԾԱԼԻՔ

## ՀԱՇԻԼՈՒԿՆԵՐ

—

Առաջ. Ախպերի

*Տրած խաղալուսիների մէջ դասաւորել 4, 5, 1, 9 (չորս սե, մի ինի) այնպէս որ ստացի երկու կրկնած բառեր, որոնց կարողանաս կարդալ ինչպէս հորիզոնական ուղղութեամբ, այնպէս եւ ուղղահայեաց: Այնպէս որ երկու կրկնած բառերը ստացուեն մի խաղաքի անուն Հայաստանում:*



# Բ. ԲԱԺԻՆ

## ՀԷՆՐԻԽ ՊԵՍՏԱԼՈՑՑԻ

1746 թվի յունուարի 12-ին, շուեյցարական Ցիւրիխ քաղաքում, մի բժշկի տաճեան ընտանիքում մանուկ ծնուեց, որին անուանեցին Հէնրիխ: Ի հարկէ, ոչոք ընտանիքի անդամներից չէր մոածում, թէ ինչպէս ապագայում նա պիտի փառաւոր անուն ստանայ, թէ ինչպիսի՛ բարձր յարգանքներ պիտի տան նրան, անուանեն արբերի հայր, չխաւորների փրկիչ, ժողովրդական դպրոցի հիմնադիր:

Հէնրիխ Պեստալոցցու անունը պատկանում է այն մեծ անուանների շարքին, որոնք երբէք չըպիտի մոռացուին երկրի վրայ:

Հէնրիխը շատ բախտաւոր մանուկ էր: Նրա մայրը, մի հարուստ գիւղացու աղջիկ, քուռն կերպով սիրում էր իր երեխաներին. հայրը՝ բարի եւ կակուղ բնաւորութեան տէր մարդ էր: Լաւ էր ապրում մանուկը: Բայց սարսափելի դժբախտութիւն պատահեց այս ընտանիքին. հայրը մեռաւ,—եւ մայրը իր երեխաներով մնաց առանց ապահովութեան, ամենաանհրին միջոցներով: Զբաղուրթիւն, նոյն իսկ մուրացկանութիւն էր սպասում այդ ընտանիքին, սակայն նա փրկուեց մի վերնամեծ ու անձնուէր աղջկայ ձեռքով: Այդ աղջիկը, որի անունը Բաբել էր, նրանց մօտ աղախին էր, բայց այնպէս էր սիրել Պեստալոցցիների ընտանիքը, որ սկսեց օգնել նրանց որքան կարողանում էր, աշխատում էր՝ առանց հանգստանալու եւ իսկական պահապան հրեշտակ էր որր մնացած ընտանիքի համար: Հէնրիխի կեանքը խաղաղ անցնում էր մօր եւ անձնուէր Բաբէլի թեւերի տակ. նրանց մէջ խաղաղում էր սէր եւ հաճոյանութիւն, ամենքը փոխադարձ վստահութիւն ունէին միմեանց վրայ. մայրն ու Բաբէլը աշխատում էին մանուկներին դաստիարակութիւն տալ. չընայած, որ նրանք երկուսն էլ գեղջկուհիներ էին, բայց եւ այնպէս լաւ էին հասկանում ուսման անհրաժեշտութիւնը: Այդ գեղեցիկ կեանքն իր հարթագաս ընտանիքում Հէնրիխ Պեստալոցցուն դարձրեց քարի, մարդասէր եւ վստահաբար վերաբերուղ, եւ նա այդպէս էլ մնաց մինչեւ իր մահը: Նրա մօր հարազատները նոյնպէս լաւ ազդեցութիւն ունէին նրա վրայ. պապը, որ պատուոր էր (քողոքականների քահանայ), քուռն կերպով սիրում էր գիւղացիներին եւ սովորեցնում էր երեխային, որ նա հետաքրքրուի գիւղական կեանքով, իսկ մի ուրիշ ազգական, որ բժիշկ էր, շատ անգամ պատմում էր նրան, թէ ինչպիսի նեղութիւնների

մէջ են ապրում գիւղացիները, որքան սակաւն է նրանց տգիտութիւնն եւ աղքատութիւնը: Տեսկայում երկրագնդի վրայ չկայ մի երկիր, որ աւելի լուսաւոր, հարուստ եւ երջանիկ լինէր՝ քան Շւէյցարիան, բայց այն ժամանակ դա մի թշուառ եւ տգէտ պետութիւն էր, որտեղ խափանում էին հարիւրաւոր քաղցած մուրացկաններ:

Ի՞նչ սկսեց անել Հէնրիխը, երբ մեծացաւ եւ տեսաւ միջնակարգ ու բարձրագոյն դպրոցների դասընթացները: Նա դարձաւ ժողովրդական ուսուցիչ: Նրան թւում էր թէ չկայ մի պաշտօն, որ աւելի լաւ եւ աւելի հարկաւոր լինի՝ քան այդ պաշտօնը:

Սկզբից նա վճռեց, որ պէտք է քնակութիւն հաստատել գիւղում եւ սեփական օրինակով ցոյց տալ գիւղացիներին, թէ ի՞նչպէս պէտք է մշակել հողը եւ անտեսութիւնը կատարելագործել: Նա իրան համար կալւածք գնեց, որը անուանեց «Նոր ագարակ»: Սակայն նրա այդ ձեռնարկութիւնը վատ գնաց, որովհետեւ նա ինքը չէնց վատ գիւղատնտես էր: Նրան ապատում էր մի ուրիշ, լայն եւ գեղեցիկ գործունէութիւն—շւէյցարական մանուկների դաստիարակութիւնը:

Ահա՛ ի՞նչպէս պատահեց, որ Պեստալոցցին սկսեց պարապել այդ գործով:

Բազմաթիւ աղքատ, թշուառ երեխաներ, որոնք ծնողներ չունէին, խափանում էին Շւէյցարիայի քաղաքներում ու գիւղերում եւ ողորմութիւն էին խնդրում: Մանուկների մէջ կային եւ այնպիսիները, որոնց չէնց ծնողներն էին ուղարկում ողորմութիւն հաւաքելու: Պեստալոցցու բարի սիրտը ապրատի զգաց, երբ նա մտածում էր այդ թշուառների մասին: Ինչ է սպասում նրանց,—մտածում էր նա: Կարելի է նրանցից շատերը կորչեն գրտից, քաղցից, արբեցողութիւնից, եւ յետոյ սկսեն գողութիւն անել եւ բանտ ընկնեն: Եւ չընայած, որ նրա գործերը վատ էին գնում եւ նրա վաստակը հազիւ էր բաւականանում կնոջ եւ փոքրիկ որդու սնունդի համար, Պեստալոցցին չկարողացաւ համբերել եւ ժողովից իր մօտ այն բոլոր մուրացիկ երեխաներին, որոնք խափանում էին շրջակայքում: Նա պատսպարեց այնքան մանուկների, որքան հնարաւոր էր:

Պեստալոցցին եւ իր կինը իրանց ամբողջ ժամանակը նուիրում էին թշուառ մանուկներին. նրանք կերակրում, հագցնում, մաքրում էին նրանց, գրել—կարդալ եւ աշխատել էին սովորեցնում: Սկզբից մանուկները ամենաւատ սովորութիւններ եւ հակումներ էին արտայայտում —չէին ուզում աշխատել կամ սովորել, մաքրութիւն չէին պահպանում, կարգապահութիւն չգիտէին: Բայց Պեստալոցցու բուռն սէրը հրաշք գործեց. յետոյ այլ եւս չէր կարելի երեխաներին ճանաչել: Նրանք բուռն կերպով կապուեցին իրանց «Հօր» հետ. որքան ուժերը ներում էին, սովորում եւ աշխատում էին, իսկ նրանց վարք ու բարքը օրինակելի դարձաւ: Սակայն ո՛րքան էլ ջանասիրութեամբ էին աշխա-

*տում երեխաները—պատրիզում; քանջարանոցում կամ դաշտում, ո՛րքան էլ Պեստալոցցին ուժերից վեր էր աշխատում, նրա գործերը ավելի եւ ավելի էին վատանում: Նա սկսեց ծախել բոլոր այն բաները ինչ որ կարելի էր ծախել, եւ վերջապէս, հասաւ այն սարսափելի օրը, երբ նրանց սկսեց սպառնալ սովամահ լինելու վտանգը: Արտասուքով հրաժեշտ տուեց Հէնրիխ Պեստալոցցին իր թանգագին աշակերտներին: Նա տսկզբում էր մտածում, թէ նրանց էլի պատում է մուրացկանի կեանքը մեծ ճանապարհի վրայ:*

*Ամենքն ասում էին, թէ Պեստալոցցին խելագարւել է: Նրա բոլոր բարեկամները երես դարձրին նրանից: Ինքը Պեստալոցցին դեռ բոլորովին երիտասարդ ժամանակ մէջքից կոացել էր ծերունու նման, մազերը սպիտակել էին. նրա երեսը կնճիռներով ծածկւեց եւ ընդունեց վշտալի, տանջալի արտայայտութիւն: Նա խորը տանջւում էր, որ իր ծեռնարկութիւնը այդպիսի անաջող վախճան ունեցաւ: Սակայն ղէպի մանուկները ու հասարակ ժողովուրդը ունեցած նրա սիրոյ ոյժը այնքան մեծ էր, որ նեցուկ էր լինում նրան այդ փորձանքի օրերում: Նա որոշեց գրքեր գրել ժողովրդական կրթութեան մասին:*

(Կըշարունակւի)



# ՓՐԻԴՐԻԿՈՍ ՓՐԷՕԲԵԼ

## «Մանկական պարտէզների» հիմնադիրը

(Շարունակ 50-ամեակի առթիւ)

—

Անճարեղ Պեստալոցցին հետևող մանկավարժների շարքում, նշանաւոր տեղ է բունում Փրէօբելը, որի դիմաւոր ծառայութիւնը կայանում է նրանում, որ նա մշակել է մինչև դպրոցական հասակի դաստիարակութեան մի նոր սիստեմ և առաջին անգամ կազմակերպել է «մանկական պարտէզներ»։

Փրիդերիկոս Փրէօբելը ծնուել է 1782 թուին, Թիւրինգիայի Օբերվէյսբախ աւանում, մի աղքատ պաստորի ընտանիքում։ Իր կեանքի առաջին տարում նա զրկուում է մօրից. այդ պատճառով նա միտքով խմանում է, թէ ինչ է պակասում այն մանուկներին, որոնք զրկուած են լինում մօր դաստիարակչական ջերմագին ազդեցութիւնից։

Ապրելով հարուստ բնութեան ծոցում՝ մանուկ Փրէօբելը շատ անգամ տանից հեռանում էր, որ առանձնանալով՝ հոգեպէս զարճանայ, հիանայ բնութեան գեղեցկութիւններով։ Նա հետևում էր գիւղացիների աշխատանքներին, միջատների, թռչունների և կենդանիների կեանքն էր ուսումնասիրում... Այդ պատճառով նրա մէջ

շուտ զարգացան դիտողականութիւնը և մտորելու, գաղափարական ձգտումների հակումները։

Փրիդերիկոսի հայրը դիւղացիներին այցելելու ժամանակ, շատ անգամ որդուն հետը վերցնում էր և այդպիսով նրան միջոց էր տալիս ծանօթանալու հասարակ ժողովրդի կեանքի ձախորդութիւններին և դիւղական մանուկների պաստիարակութեան պակասութիւնների հետ։

Երբ հայրն ամուսնանում է երկրորդ անգամ, փոքրիկ Փրիդերիկոսը իր հայրական տանը շատ դառնութիւններ է կրում։ խորթ մայրը, ինչպէս շատ անգամ պատահում է, չի սիրում նրան, և խեղճ երեխան շատ էր տուժում նրանից, մինչև որ նրա անդաւակ քեռին, որ նոյնպէս պատուոր էր, խղճաց նրա վրայ և վերցրեց իր մօտ։ Այդ ժամանակ Փրէօբելը դպրոց մտաւ, բայց դպրոցում նա շատ էլ լաւ չէր սովորում։ Դպրոցական դաստիանդութիւնն այն ժամանակ չոր ու ցամաք և շատ տաժանելի էր մանուկների համար. նրանց հարկադրում էին բոլորովին անհասկանալի դրքերը բերան անել՝ ուշադրութիւն չդրարձնելով ոչ մանուկների կեանքի վրայ, ոչ էլ նրանց մտաւոր ու ֆիզիքական զարգացման վրայ։ Եւ ահա դեռ այդ ժամանակից մանուկ Փրէօբելի գլխում սկսում է ծնուել մի նոր, բոլորովին ուրիշ դպրոցի նախագիծ, որտեղ ուսումը ցանկալի էր որ ձուլուի կեանքի հետ և երեխան զարդանար թէ ֆիզիքապէս և թէ մտաւորապէս — նոյնպէս ներդաշնակ, ինչպէս ամեն բան ներդաշնակ է Աստծոյ լոյս աշխարհում։

Բայց կեանքը նրա համար ամենադառն հիասթափութիւններ էր պատրաստում։ Հազիւ նա տասնևհինգ տարեկան էր դառել, երբ խորթ մայրը ստիպեց, որ Փրիդերիկոսը դրագրի պաշտօնով մտնէ քաղաքային վարչութիւնը։ Նրա եղբայրներն արդէն համալսարանում էին, բայց խորթ մայրը՝ խնայողութիւն անելու համար՝ չէր ուզում, որ Փրիդերիկոսն էլ մտնէ այնտեղ։

Դրա մասին չէր էլ երազում Փրէօբելը։ Նա ուզում էր ուսումնասիրել բնութիւնն այն մեծ դրքի վրայ, որի էջերը շարունակ բաց են բոլոր զգայուն սրտերի համար։ Նա երազում էր ազատակատէր (Փերմեր) դառնալու։ Այդ պատճառով հայրը տասնևհինգ տարեկան Փրիդերիկոսին յանձնեց մի անտարապետի, որ հետը պարապէր։ Անտառապետը ոչինչ չէր սովորեցնում իր աշակերտին, բայց սա ա-

ուանց ուսուցչի էլ կարողանում էր օգտուել նրա տանը գտնուղ բնագիտական և մաթեմատիքական դրքերից: Այդպէս անցաւ երեք տարի. և ուսուցիչը՝ Ֆրէօբելի ծնողների աչքում իրան արդարացնելու համար՝ նրա մասին ամենալատ կարծիքը յայտնեց, բայց և այնպէս Ֆրէօբելը անտառապետի կոչման վկայական ձեռք բերաւ, որովհետև դործնականապէս ուսումնասիրել էր անտառաբուծութիւնը:

Ուսանելու ցանկութիւնը և գիտութեան ծառայը նրան աւելի ևս հեռու են մղում: Նա հիմա արդէն իր եղբօր հետ իենայումն է համալսարանում, որտեղ նա ուսումնասիրում է բնագիտական և մաթեմատիքական գիտութիւնները: Անցնում են մի քանի սեմեստրներ (կիսամեակներ), և Ֆրէօբելը պարտքի համար բանտ է ընկնում, որտեղ սկսում է բուռն կերպով սովորել լատիներէն լեզուն: Հայրը՝ վճարելով որդու պարտքերը՝ ազատում է նրան, և Ֆրէօբելը՝ դիջելով հօր ցանկութեանը՝ ծառայութեան է մտնում մի հարուստ կալուածատիրոջ կալուածքը: Հօր մահից յետոյ նա նորից սկսում է գիտութիւնների ուսումնասիրութեամբ պարապել. այս անդամ նա ուսումնասիրում էր փիլիսոփայական աշխատութիւններ և ճարտարապետութիւն:

Սակայն նոր դպրոցի նրա նախագիծը, որի մասին նա մտածում էր դեռ մանուկ հասակից, շարունակում էր զբաղեցնել նրան, աւելի և աւելի զարդանալ, թէև Ֆրէօբելը ինքն էլ չէր կարծում այն ժամանակ, որ իր անմիջական կոչումը դաստիարակ և ուսուցիչ լինելն է: Բայց ինքը հակատագիրը նպաստում էր այդ բանին:

Փորձնական պարապմունքներ որոնելու համար՝ նա գնում է Ֆրանկֆուրտ (Մայնի վրայ), ուր մտածում է այգեպանութեամբ և ճարտարապետութեամբ պարապվել: Պատահականութիւնը այստեղ որոշում է նրա իսկական կոչումը: Նա ծանօթանում է մանկավարժ Գրունէրի հետ, որը նոր հիմնարկած նորմալ դպրոցի վերատեսուչ էր: Մտերմական զրոյցի ժամանակ Ֆրէօբելը ցանկութիւն յայտնեց այնպիսի մի դործունէութիւն սկսել, որտեղ կարելի լինէր դործադրել բնութեան օրէնքների դիտութիւնը և որի ժամանակ կարելի լինէր աւելի խորը ուսումնասիրել այդ օրէնքները: Գրունէրը նկատեց, որ դաստիարակի դործունէութիւնը համապատասխան է նրա ձգտումներին: «Փուք պէտք է ոչ թէ հողը պարարտացնէք, այլ

մատաղ զլուխները, ոչ թէ տներ շինէք, այլ դպրոցներ ստեղծէք, ոչ թէ բոյսեր աճեցնէք, այլ մանուկներ»: «Գրուներըը,—ասում է Փրէօբելը,—գուշակեց իմ կոչումը և միանգամից բացաւ իմ աչքերը, և ես չըտատանուելով՝ մանկավարժ դարձայ»:

Այդպիսով Փրէօբելի ընդունակութիւններն առաջին անգամ նկատում և գնահատում է Գրուներ, որն և առաջարկում է նրան ուսուցչի պաշտօն նորմալ դպրոցում:

—Երբէք ես չէի մտածում ուսուցիչ լինել,—գրում էր Փրէօբելը իր եղբօրը.—բայց երբ մտայ դասատուն, որը բաղկացած էր երեսուն մանուկներից, 9-ից մինչև 11 տարեկան հասակը, ինձ տիրից մի չափազանց հաճելի զգացմունք, և ես ինձ բախտաւոր զգացի, ինչպէս ձուկը ջրի մէջ, թռչունը՝ օդում»:

Գրուները շատ գոհ էր Փրէօբելից, բայց Փրէօբելը գոհ չէը այն ժամանակի դասաւանդութիւնից: «Սովորական դասաւանդութիւնը զրքի վրայ,—ասում է Փրէօբելը.—ինձ դուր չէը գալիս. նա միշտ թուում էր ինձ չոր ու ցամաք և մեռած: Այդպիսի դասաւանդութեան պատճառով ես ատեցի դպրոցն և նրանից փախչում էի դէպի անտառ: Բնութիւնն իմ գիմնազիան էր. ծառերն ու ծաղիկները—իմ ուսուցիչները: Ի՞նչպէս ես կարող էի տանջել ուրիշներին այն բանով, ինչ որ ինձ համար ատելի էր: Ստիպած ես ինքս պէտք է նոր, աւելի լաւ ճանապարհներ որոնէի»: Այդ պատճառով նա սկսեց եռանդով կերպով ուսումնասիրել նախորդ մանկավարժներին, մանաւանդ Պեստալոցցուն, որի գաղափարները նրան գրաւեցին դէպի Իւերդոնի (Iverdon) ճեմարանը:

1808 թուին Փրէօբելը գնաց Իւերդոն (Շուէյցարիայում), որտեղ ուսուցչի պաշտօնով մտաւ հռչակաւոր մանկավարժի ճեմարանը: Այստեղ նա հասկացաւ, վերջապէս, որ դաստիարակութեան և ուսուցման նրա նոր նախագիծը մեծ գործ է, որին պէտք է նւիրել ամբողջ կեանքն և որ մանկան բնութիւնը պէտք է բազմակողմանի կերպով զարգանայ:

Նոր եռանդով նա սկսեց շարունակել իր պարապմունքներն աշակերտների հետ, բայց՝ զգալով իր գիտութեան անկատար լինելը և մեծ դժւարութեամբ մի փոքրիկ գումար յետ ձգելով՝ 1811 թուին նա մտաւ Գեօտինգէնի և ապա Բերլինի համալսարանը. երկու տեղն էլ նա շարունակում էր ուսումնասիրել իր սիրելի բնագիտական առարկաները և լեզուները:

Բեռլինի համալսարանում պարապելով՝ նա միևնոյն ժամանակ ուսուցչութիւն էր անում Պեստալոցցուն հետևող Պլամոնի դպրոցում: Այդ ժամանակ, 1813 թուին, Պրուսսիան պատերազմ յայտարարեց Նապոլէօնին, որ մեծ անաջողութիւնների էր ենթարկւել Ռուսիայում, Ֆրէօբելը ուսանողների հետ կամաւոր ղինւոր գրւեց:

Զօրքի մէջ նա բարեկամացաւ ուսանողները Վիլ'Հելմ Միդղէնդորֆի և Հէնրիխ Լանգեթալի հետ, որոնք յետոյ դարձան նրա դաղափարների հետևողներ և տարածողներ: Պատերազմից յետոյ Ֆրէօբելը վերադարձաւ Բեռլին և ստանձնեց արքայական Հանքաբանական մուզէյի տեսչի պաշտօնը՝ պարտաւորւելով համալսարանում դասախօսութիւններ կարդալ Հանքաբանութիւնից:

Այս պաշտօնը, թէև անմիջապէս չէր վերաբերւում նրա մանկավարժական գործունէութեանը, բայց և այնպէս նրա կեանքի այդ շրջանը անհետևանք չանցաւ և նպաստեց պարզելու նրա Հիմնական, առաջնորդող դաղափարը՝ արտաքին բնութեան մարդու ներքին աշխարհի օրէնքների համանմանութեան մասին: Ինքը Ֆրէօբելն ասում է իր կեանքի այդ շրջանի մասին. «Հիմա իմ տեսակէտից բնութիւնն ու մարդը փոխադարձաբար լրացնում են իրար. ես հասկացայ, որ բնական գիտութիւնների ուսումնասիրութիւնն առիթ է տալիս մարդուն ուսումնասիրելու իրան և իր դոյութեան օրէնքները»:

Այդ ժամանակ մեռաւ Ֆրէօբելի եղբայր Խրիստիանը, որի այրին և երեք փոքրահասակ երեխաները մնացին առանց ապրուստի միջոցի,—և Ֆրէօբելը դարձաւ այդ ընտանիքի կերակրողը, տեղափոխւելով նրանց մօտ Ֆրիսհայմ գիւղը. այստեղ նա իր սեփական դպրոցը հիմնեց, որի առաջին աշակերտները հէնց իր եղբօր որբերն էին: Յետոյ այդ դպրոցը տեղափոխւեց մերձակայ Քէյլհաու գիւղը: Ֆրէօբելի այս դպրոցում աշակերտական կեանքը նմանում էր ընտանեկան կեանքի:

Իր դպրոցը կառավարելու ժամանակ Ֆրէօբելը համոզւեց, որ դպրոցական դաստիարակութիւնն այն ժամանակ միայն կարելի է բարձրացնել, երբ կրքարձրացնւի սկզբնական դաստիարակութիւնն ընտանիքում: Այդ պատճառով էլ նա նպատակ դրեց մշակել մինչև դպրոցական հասակի դաստիարակութեան սկզբունքները: Ուստի նա սկսեց ուսումնասիրել փոքրիկ մանուկներին՝ իրաքանչիւր յար-

մալ դէպքում պիտելով նրանց կեանքը: Երբեմն նա ամբողջ օրերով մնում էր մանուկների մէջ, շատ անգամ մասնակցելով նրանց խաղերին:

Դժւար գործ էր սկսել Ֆրէօբելը: Նա ուզում էր ցոյց տալ ամբողջ աշխարհին, որ ուսումը չի կարելի պատւաստել անպատրաստ ուղեղին, ինչպէս վայրի խնձոր ենուն պատւաստում են պարտիզում կտրած ընձիւղները: Գրքի վրայ սովորելը, նրա սիստեմով, պէտք է ձեռքի աշխատանքի և մտաւոր ու ֆիզիքական զարգացման հետ զուգընթաց լինի: Նա ուզում էր, իր ամեն մի աշակերտը՝ գիտութեան ծարաւ զգալով՝ սիրով և բաւականութեամբ սովորէ, որ երկինքն ու երկիրը նրա համար մի անվերջ գիրք լինեն, որի վրայ նա երբէք չըձանձրանայ կարդալու: Մլդրէնդորֆն ու Լանգետալը նրան եռանդուն կերպով աջակցում էին:

Այդ ժամանակին է վերաբերւում Ֆրէօբելի հրատարակած մի մեծ աշխատութիւնը՝ «Մարդուս դաստիարակութիւնը» վէնագրով: Ընդհանրապէս խաղաղ ու արդիւնաւոր էր Ֆրէօբելի գործունէութիւնը Քէյլհաու. ուսուցիչներն ու աշակերտները կարծես մի ընտանիք էին կազմում: Ֆրէօբելը, վերջապէս, հասաւ իր նպատակներից մէկին, որ աշակերտը դպրոցում իրան զգայ, ինչպէս տանը: Նրա սանների խանդաղատանքը հաշտեցնում էր նրան՝ կեանքի դժւարութիւնների հետ:

Քէյլհաուում Ֆրէօբելը աշխատեց մինչև 1850 թ.: Յետոյ նա գործը յանձնեց բարեկամներին և ինքը ճանապարհւեց Ձւէցարիա՝ իր գաղափարները քարոզելու: Լիւցէրնում ունեցած անաջող փորձերից յետոյ՝ 1833 թւին նա դպրոց բացաւ Բուրգդորֆում, Զելէնբախի մօտ: Այդ հիմնարկութեան մէջ ոչ միայն մանուկներ էին դաստիարակւում, այլ և ուսուցչական գործունէութեան համար երիտասարդ մանկավարժներ էին պատրաստւում, որոնց համար առանձին դասընթացներ բացաւ նա իր դպրոցին կից:

Ձւէցարիայում Ֆրէօբելը մնաց մինչև 1836 թ., որից յետոյ նոր շրջան է սկսւում նրա գործունէութեան մէջ. նա վերջ ականապէս ընկաւ այն ճանապարհը, որը նրա համար վառք ստեղծեց: Իր մանկավարժական երկարամեայ գործունէութեան ընթացքում (1816—1836) նա եկել էր այն եզրակացութեան, որ դպրոցական կրթութեան պակասութիւնների և անաջողութիւնների գլխաւոր պատճառը դպրոց մտնող մանուկների խելացի դաստիարակութեան բացակայութիւնն է:

Այդ համոզմունքի շնորհիւ, ինչպէս ասացինք, նա շատ էր աշխատում մանկական բնութիւնն ուսումնասիրելու, շատ էր մտածում այն միջոցների մասին, որոնցով կարելի լինէր բարձրացնել մայրական պատիւարակութիւնը՝ մանկան բնական ուժերը ներդաշնակօրէն զարգացնելու նպատակով։ Այդ ոգով է ներշնչւած նրա «Մարդու դաստիարակութիւնը» խորագրով աշխատութիւնը։

Նա եկել էր նաև այն եզրակացութեանը, որ պէտք է, որքան հնարաւոր է, շուտ նկատել մանուկների հակումները, ձգտել զարգացնելու լաւ կողմերը և խեղդելու վատը, մանկական խաղերով զարթեցնելու այն ծարաւի սկիզբը, որը յայտնի է դիտութեան ծարաւ անունով։

Բուրգդորֆում շատ ուսուցիչների հետ յարաբերութիւններ ունենալով՝ նա աւելի և ևս համոզուեց իր գաղափարների կենսունակութեան մասին։ Այդ գաղափարների ազդեցութեան տակ նա թողնում է Զուէցարիան և վեց ամիս Բերլինում մնալուց յետոյ՝ Բլանկենբուրգում, Քէյլհաու'ից ոչ հեռու հիմնում է իր առաջին «*մանկական պարտէզը*», որը Հանդիսաւոր կերպով բացւեց տպագրութեան Հնարող Գուտտենբերգի ծննդեան տարեդարձի օրը։ Այդպիսով առաջին ֆրէօբէլեան հիմնարկութիւնը՝—մինչև դպրոցական հասակի մանուկների համար՝ բացւում է 1837 թ.ին։ Միջոցների սղութեան պատճառով նա, սակայն, երկար գոյութիւն չունեցաւ։ Բայց նրա հիմնարկութեան գաղափարը չանհետացաւ և աստիճանաբար տարածւեց ամբողջ կուլտուրական աշխարհում։

Այդ առաջին փորձից յետոյ՝ Ֆրէօբելը դարձեալ շարունակեց ղբաղւել «մանկական պարտէզների» կազմակերպութեամբ։ Այդպիսի «պարտէզներ» նա բացաւ Համբուրգում, Դրեզդէնում, Լայպցիգում և այլ քաղաքներում։ «Մանկական պարտէզներում» նա իրականացրեց այն մանկավարժական սկզբունքները, որոնց նա ձեռք էր բերել՝ մանուկներին դիտելով և ուսումնասիրելով։

Ֆրէօբելը, իր «մանկ. պարտէզներում» միաժամանակ ուշադրութիւն դարձնելով կրթութեան և դաստիարակութեան վրայ, աշխատում էր ղբաղեցնել մանուկներին՝ թղթից զանազան իրեր պատրաստել տալով նրանց, պարտիզում աշխատացնելով. խաղերի և պարապմունքների համար նրանց տալիս էր հանրամատչելի իրեր՝ ջուր, քարեր, կաւ, փայտէ խորանարդներ։ Նա բացօթեայ խաղեր էր հնարում,

սովորեցնում էր գնդակով խաղալ և այլն. սովորեցնում էր խնամք տանել բոյսերին, ծաղիկներին... Դիւով ալևոր, բայց սրտով և հոգով թարմ և աշխոյժ ծերունին խաղում և վազվզում էր փոքրիկ մանուկների հետ, որոնք ղգում էին, որ նա իրանց անկեղծ և սրտակից բարեկամն է:

Ցյստեղ պէտք է աւելացնել, որ Ֆրէօբելից առաջ էլ Գերմանիայում, Ֆերմանիայում և այլ երկրներում սկսել էին հիմնարկել «մանկական ապաստարաններ», «մսուրներ» և այլ հիմնարկութիւններ մանուկներին խնամելու համար: Սակայն Ֆրէօբելն առաջինն էր որ սկսեց աշխատել մանկան դաստիարակութեան օրէնքներն ուսումնասիրելու, ցոյց տուեց դաստիարակութեան միջոցները և առաջինը գործադրեց այդ միջոցներն իր «մանկական պարտէզներում»:

1839 թուին Ֆրէօբելը ծանր դժբախտութեան ենթարկուեց. նա զրկուեց իր ամուսնուց, բայց այդ վիշտը չկոտրեցրեց նրա եռանդը: Ընդհակառակը՝ նա նոր ուժերով շարունակեց իր ծանր աշխատանքը:

1851 թուին Ֆրէօբելի օգնականուհին եղաւ նրա երկրորդ կինը, որի սէրը և եռանդն օգնեցին Ֆրէօբելին տանելու մի ծանր հարուած, այն է, Պրուսիայում գտնուող նրա դպրոցները փակելու կարգադրութիւնը: Հակառակ կուսակցութիւնը յաղթանակը տարաւ Ֆրէօբելի դէմ, թէև այդ յաղթ ութիւնը չէր կարող երկար տևել:

1848-ին նա գերմանական կառավարութեանը մի զեկուցում է ներկայացնում իր «մանկական պարտէզների» մասին: Հէնց այդ ժամանակ հրատարակեց նրա եղբօր որդու—Կարլի մի բրօշիւրը սոցիալիզմի մասին: Կառավարութիւնը կարծում էր, թէ Ֆրիդ. Ֆրէօբելը համակրում է Կարլի գաղափարներին, թէև նրանց ձգտումները բոլորովին հակառակ էին միմեանց: Եւ ահա խեղճ ծերունուն սկսեցին մեղադրել ամէնիզմի և կոմմունիզմի մէջ: Դրա հետևանքն այն եղաւ, որ լուսաւորութեան նախարարը 1851 թուին հրաման արձակեց փակել այն մանկական պարտէզները, «որոնք հիմնուած են Ֆ. և Կարլ Ֆրէօբելների սիստեմով», թէև Կարլը մաս չունէր այդ «պարտէզների» հիմնարկութեան մէջ: Ի դուր Ֆրէօբելը աշխատում էր իրան արդարացնել. ուսուցչական համաժողովի անդամների միջամտութիւնը նոյնպէս չօգնեց: Նախարարի արգելքը վերացրեց Ֆրէօբելի մահից 10 տարի յետոյ միայն: Նա չկարողացաւ տանել այդ հարուածն ու վիրաւորանքը: Ծանր ու յամառ աշխատանքն և այդ հարուածը չլատեցին Ֆրէօբելի ուժերը: 1852-ի յունիսին նա վախ-

ճանուեց; 70 տարեկան հասակում: Նրա մահը ողբացին ամենքը, մանաւանդ մանուկները, որոնք զրկուեցին իրանց «Ֆրիդրիխ—պապից»: Այլ ևս չըկար այն մարդը, ինչպէս Ֆրէօբելի մասին ասաց իր դամբանական ճառի մէջ նրա բարեկամ Մլդգէնդորֆը, «որը մանկան մէջ կարդում էր մարդկային բնութեան գաղտնիքները, որպէս զի կարելի լինի նրանից մշակել աւելի կատարեալ մարդու. բայց յաւիտեան կը-մնայ կենդանի այն բոլորը, ինչ որ նա արել է մարդկութեան համար:

Ֆրէօբելի գաղափարները նրա մահից յետոյ էլ զարգանում և աւելի ու աւելի լայն ճաւալ էին ստանում: Չիմա չըկայ մի այնպիսի երկիր, որտեղ մանկական պարտէզները չըլինէին: Իսկ Ֆրէօբելի պարտէզների նպատակն այն է, որ մանուկների զգայարանքների գործարանները զարգացնեն, նրանց արթնացող գիտակցութեանը նիւթ տան, օգնեն մանկանը ազատութեամբ և հեշտութեամբ գլուխ հանելու իրանց շրջապատող բազմաթիւ առարկաներից և երևոյթներից:

«Մանկական պարտէզները», սակայն, մեծ նշանակութիւն ունին ոչ միայն զուտ դաստիարակչական—մանկավարժական տեսակէտից. նրանք ոչ պակաս գործնական նշանակութիւն ունին նաև մայրերի համար. մանաւանդ չքաւոր մայրերի: Տանից դուրս գալու և աշխատանքի գնալու ժամանակ մայրերն իրանց երեխաներին տանում են «մանկական պարտէզը»: Այստեղ հսկում են նրանց վրայ, օգտաւէտ և զարճալի պարապմունքներ են տալիս, առաջնորդում են խաղերի ժամանակ: Երեկոյեան, օրւայ պարապմունքները վերջացնելուց յետոյ, մայրերը մանում են «մանկական պարտէզը» և վերցնում են իրանց մանուկներին:

Ահա այդքան մեծ է մանկական պարտէզների նշանակութիւնը դաստիարակչական և զուտ գործնական տեսակէտից: Նրանց հիմքը դնելով՝ Ֆրէօբելը մեծ ծառայութիւն է արել մանկավարժութեանը և դրանով իր անունն անմահացրել: Սակայն «մանկական պարտէզները» մինչև այժմ էլ ունին իրանց հակառակորդները:

Մի ուրիշ անգամ աւելի մանրամասն կրխօսենք այն մանկավարժական սկզբունքների մասին, որոնք այնքան ցանկալի են դարձնում «մանկական պարտէզները» գոյութիւնը *):

**Զաքար Տէր-Գրիգորեան**

*) Մեր աղբիւրները՝
1. «Русская школа»,
2. «Дѣтское чтеніе» և «Педагогическій листокъ» և
3. К. Ельницкій «Очерки по исторій Педагогики». СПБ., 1885 г.

*Խմբագրի-հրատարակիչ՝*
ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

## Խմբագրությունից

*Մենք հնարաւորութիւն ունինք* Աղբիւրը *հրատարակել շատ իմաստալից, ճոխ և բազմաբովանդակ, եթէ միայն հայ ծնողներն իրանց բաժանորդագրութեամբ աջակցեն մեզ: Միմիայն հէնց այս* 1903 *թ.* Աղբիւր 500 *օրինակից աւելի են մընում ամբարւած խմբագրատանս: Զարմանակում է ներկայ թւականի թէ* Աղբիւր *և թէ* Տարազի *բաժանորդագրութիւնը. նոր գրւողները կըստանան սկզբի №№-իցյ և փառահեղ պրէմիան էլ ս. Էջմիածին, աքանչելի ֆոտոց-գրաւիւր, պատրաստւած Եւրոպայում: Այս պրէմիան յոյսունենք նոյեմբերի վերջին հասցնել բաժանորդներին:*

*Գալով* Տարազին, *մենք հնարաւորութիւն ունենք, մի քանի հարիւր հազար բաժանորդ ունեցող թերթերի հետ մրցել, եթէ ունենանք գէթ* 3000 *վճարող բաժանորդ:*

# Հրաւէր

Ս ղ բ ի ւ ր-Տ ա ր ա գ ի ս ալիցեալ 1902 թ. պրեմիայից՝ Զմեան Բարեկենդան (Վեռնդ Երէց օրհնում է եկեղեցու պաշտպաններին), վնում է շատ օրիւակներ։ Այդ պատկերը նախկին տարին վաճառում էր հատը 3 ր., Ս ղ բ ի ւ ր-Տ ա ր ա գ ի ս բաժանորդների համար 1 ր. Այժմս վնվիճ իջեցնում ենք այդ պատկերի գինը 100-ով առնողների համար հատը 1 ր., մեր բաժանորդներից 100-ով առնողներին 75 կոպեկ կանխիկ։ Խնդրագրութեանս մէջ վնում են եւ շատ օրիւակներ Ալբում-Ալմանախ (101 պատկերով), Արտաշէս Բ. Թագաւորի մուտքը Հռոմ, Միքայէլ Նալբանդեան, ձեւնադպրոց վրայ Գրիգոր Արծրունի եւ այլն եւ այլն։

Մի՛թէ գաւառներում չկան ձեռնհաս, շրջիկ գործակատներ, որ կարողանան թէ իրանց շահեն եւ թէ խնդրագրութեանս աջակցեն։ Զարշարում ենք, հրապարակում, մի կողմ թողնելով հազար ու մի տանջանքներն, մեծ պարտքերի տակ ընկնում, հրապարակում եւ դիզում անընդատակ։